

Ա. Մարգարյան

„2“ ՆԱԽԴՐԻ ԲԱՌՆԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

(Բառաքնական էություն)

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ «զ» նախդիրը, իբրև հիմք-լեզվից ծագող հնագույն ձև, հայերենի զարգացման գործում շատ վաղուց խաղացել է չափազանց կարևոր դեր։ Ինչպես հայագիտության կարճատև ներկայացուցիչներ Ա. Մելեն, Հ. Հյուբշմանը և Հո. Աճառյանն են ժամանակին ապացույցել, նա ոչ թե սոսկ արտահայտել է հոլովական բացմազան հարաբերություններ, դրվելով մի քանի հոլովների վրա, այլև հանդես է եկել բառակազմական որոշակի արժեքով ու նշանակությամբ։ Դրա ուսումնասիրությունն էլ հենց, պետք է ասել, լեզվաբանական ոչ պակաս հետաքրքիր էություն ու կարևորություն է ներկայացնում, այն էլ ոչ միայն հայերենի բառային կազմի հարցերը պարզաբանելու, այլև ստուգաբանական ու իմաստաբանական որոշ վերլուծություններ կատարելու տեսակետից։

Եվ իսկապես՝ հենց այն հանգամանքը, որ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» «զ» տառի տակ բերվող 2141 բառերից գրեթե կես մասի սկզբնատառը երբեմնի «զ» նախդիրն է, վկայում է, որ այն, գործածվելով մի շարք արմատների հետ, դրանց տվել է իմաստային երանգավորում ու նոր նշանակություն։

Այլևի կոնկրետ. «զ» նախդրի և առանձին արմատների միաձուլմամբ առաջ են եկել բազմաթիվ նոր բառեր և այդ ճանապարհով ևս համարվել ու հարստացել է հայերենի բառապաշարն ու բառաշանձը։ Այդ են հաստատում, օրինակ, $զգալ = գ + գալ$, $զգոյշ = գ + գոյշ$, $զալդ = գ + ալդ$, $զով = գ + հով$, $զարթուն = գ + արթուն$, $զբաղ(ի) = գ + բաղ(ի)$, $զատ = գ + հատ$, $զիջել = գ + իջել$, $զ — իջանել$, $զանց = գ + անց$, $զեռալ = գ + եռալ$, $զարմանալ = գ + արմանալ$, $զոդ = գ + յոդ$, $զայրանալ = գ + այր(ել)$, $զետեղել = գ + ետեղել$, $զգոն = գ + գոն < գ — գալ$, $զեղծ = գ + եղծ$ և այլն, զուգադիր ձևերի համեմատությունը, որից էլ պարզ կրկնում է, որ նրանք բնավ էլ ճիշտ միևնույն բաները չեն, այլ եթե մի մասը տակալին պահպանում է իմաստային խիստ մոտիկություն (համտ. $զով < հով$, $զարթուն$ արթուն, $զեռալ < եռալ$), ապա մյուս մասը, ընդհակառակն, շատ ավելի մեծ փոփոխություններ է կրել, իմաստապես բալանյան հեռանալով իրարից, ինչպես, օրինակ՝ $զալ — զգալ$, $իջնել — իիջել$, $այրել — զայրանալ$ և այլն։

«2» նախդրի և առանձին արմատների միաձուլմամբ նոր բառեր կազմվելու վերահիշյալ երևույթը, անշուշտ, կապվում է հայերենի զարգացման ավելի վաղ շրջանի հետ. լեզվաբան տվյալները ցույց են տալիս, որ այն սկիզբ է առել դեռևս հնագույն ժամանակներից և լայնորեն գործել է նախադրարության շրջանում, թեև գրաբարի շջանում ևս բոլորովին չի դադարել գործելուց և շարունակել է տակալին կազմել նորանոր բառեր։

Եվ հենց այն բառերը, ինչպես, օրինակ՝ զգեստել, զկծիլ, զանխուլ, զառաջաւոր, զգնալ, զնստել, զմտաւ ածել, զգայուել, զգլխել և այլն, որոնցում ավելի որոշ է զգա-ի գիտակցումը, ինքնին հաստատում են բառակազմական չիշլալ պրոցեսի դործունութիւնը, ինչպես նաև այն, որ նշված ձևերը ավելի ուշ կազմութիւններ են: Եվ ընդհակառակն, այն բառերը, ինչպես, օրինակ՝ զայրանալ, զգոյշ, զգեստ, զգաստ, զարկ, զերծ, զեղծ, զւրկ, զարմ, զատ և այլն, որոնցում զգա-ն մթագնված է և մի տեսակ անբաժանելի՝ ավելի վաղ շրջանի բարդութիւններ են և համեմատաբար ավելի երկար ժամանակի պատմութիւն ունեն:

Իրա լավագոյն ապացույցներից մեկն այն է, որ զգա նախդիրը հիմնականում բաղադրվել ու ձուլվել է այնպիսի արմատների հետ, որոնք անմիջապես ծագում են հիմք-լեզվից և հնդեվրոպաբանութիւն հորջորջմամբ բուն հայկական ձևեր են. այդպիսիներից են, օրինակ, յօղ<հնխ. au-dh¹, ակն<հնխ. oki², այրել<հնխ. ātēr³, ամ<հնխ. sama⁴, հար կ) (անել)<հնխ. per⁵, արգ<հնխ. art⁶, երծ<հնխ. serg⁷, ու<հնխ. qui⁸, արթ(ուն)<հնխ. orth⁹, ուրկ<հնխ. urg¹⁰ և այլն, արմատները, որոնք առկա են զօղ, զակնիլ, զայրանալ, զայրոյթ, զառամ, զարկ, զերծ, զի, զարթուն, զուրկ բառերում: Բնորոշ է և այն, որ զգա-ով հավելված մի շարք արմատներ տակավին անստույգ են, ինչպես՝ զ—անց, զատ<զ—հատ, զ—արհ—ուրիլ, զ—բաղ և այլն, որոնց մի մասի հնդեվրոպական ծագումը մեծ հայագետը՝ Հր. Աճառյանը, խիստ հավանական է համարում¹¹:

Եզրակացութիւնը պարզ է. հնագոյն ձևերի բաղադրութիւնն ու միաձուլումը ինքնին դրանց առաջացման հնութիւնն են երևան հանում, ի հայտ դարձնելով միաժամանակ, որ զ-ի ձուլմամբ նոր բառեր կազմվելու պրոցեսը հատուկ է եղել հայերենի զարգացման միայն որոշ շրջանի, որի ընթացքում էլ հենց գործել է նա:

Այդքանից, սակայն, սխալ կլինի հետևանք, թե հենց այդ որոշ շրջանում էլ զգա-ն ընդհանրապես բաղադրվել է տմեն մի արմատի հետ և ըստ

¹ Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, Է հատ. 1933, էջ 169:

² Անդ, 1 հատ., էջ 84—92:

³ Անդ, էջ 269—272:

⁴ Անդ, էջ 179—180:

⁵ Անդ, հատ. 4, էջ 163—171:

⁶ Անդ, հատ. 1, էջ 651—658:

⁷ Անդ, հատ. 7, էջ 129:

⁸ Անդ, հատ. 3, էջ 53—54:

⁹ Անդ, հատ. 1, էջ 674—676, աւս նաև հատ. 7, էջ 97:

¹⁰ Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտութիւններ), № 1, 1932, էջ 45—46:

¹¹ Ստուգաբանված բառերից միայն երեքի (զգոյշ, զարդանալ և ժոյժ) արմատներն են, որ փոխառյալ են. զգոյշ-բկազմված է զ+զոյշ ձևից (զոյշը ծագում է իրանականից և բուն նշանակում է լուսիք, ուշադրութիւն արած կամ լուսող, ուշադրութիւն անող), Արմատական բառարան, հատ. 2, էջ 925—926 և 261—263), զարդանալ-ը՝ զ—արգ արմատից, որը ծագում է իրանյան *ard- ձևից (Արմ. բառարան, հատ. 1, էջ 633—637), իսկ ժոյժ-ն էլ «կազմված է ոյժ փոխառյալ բառից՝ ո զորացուցիչ նախդիրով, որ հետո բառավերջի օ-ի ազդեցութեամբ դարձել է ժ. այս է պատճառը, որ հին հայերենի մեջ ժոյժ չի գործածվում առանձին, այլ ասվում է միայն ժոյժ ունել՝ իբր գոյժ ունել» (Արմ. բառարան, հատ. 3, էջ 47—48):

այդմ էլ կազմել նոր բառերու լեզվական փաստերը այս դեպքում ես, ինչպես պարզ հայելու մեջ, ցույց են տալիս, որ նա գործ է ածվել ոչ թե ամեն մի ալլ միայն որոշ հնչյուններով սկզբնավորվող որոշ արմատների հետ. աստիճանաբար ձուլվելով նրանց:

Այդ տեսակետից ամենից առաջ հատկանշական է զգ-ի գործածությունն ու բաղադրությունը ձայնավորով սկսվող արմատների հետ. առ իսկ պատճառով էլ զգ-ով բաղադրված բառերի շարքում նման ձևերը բնականաբար գերակշիռ մաս են կազմում, ինչպես, օրինակ՝ զահտհ սր, զահանդել, զադ-փաղփուց, զայրանալ, զայրացկոտ, զայրոյթ, զանց, զարգանալ, զարգացում, զարդ, զսրդարել, զարդարուն, զարթուն, զարթուցիչ, զարհուրել, զարմ, զարմացալ, զարմանք, զեկոյց, զեղծ, զերծ, զեկուցել, զեկուցում, զեռալ, զեռուն, զընկենուլ, զի, զիջանել, զետեղել, զօր (զաւր, дѣнь), զօրեն, ծոյծ և այլն և այլն:

Երկրորդ՝ զգ-ն գործ է ածվել հ-ով կամ յ-ով. որ նախորդել են որևէ ձայնավորի, սկսվող որոշ արմատների հետ, բայց այս դեպքում էլ հ-ն կամ յ-ն դուրս են ընկել, և զգ-ն սերտորեն կապվել է դարձյալ ձայնավորի հետ, ինչպես, օրինակ՝ զարկ<զ+զհար(կ) անել, զատ զ+հատ, զօղ<զ+յօղ, զեղուլ<զ+հեղուլ, զատակ<զ+յատակ և այլն:

Եվ այնուհետև եթե նկատի ունենանք, որ զգ-ն ոչ սակավ դրվել է նաև ձայնավորով սկսվող նախածանցների կամ նախդիրների վրա, ինչպես զանգիտել<զ+ան+գիտ(ել), զառածել<զ+առ+ածել, զառամ<զ+առ+ամ, զառքաշ<զ+առ+քաշ, զառիթափ<զ+առ+ի+թափ, զառիվայր<զ+առ+ի+վայր, զարտուղի<զ+արտ+ուղի, զանիտել<զ+ան+իտել և այլն, ապա ինքնին պարզ կլինի, որ այն իսկապես ավելի շատ ձայնավորով սկսվող արմատների հետ է, որ ձուլվելու տենդենց է հանդես բերել:

Իայց սրանով չի բացառվում զ-ի գործածությունը նաև բաղաձայնով սկսվող արմատների կամ բառերի հետ, և հետևաբար՝ նման ձևեր ես կան հայերենի բառային կազմում. սակայն պետք է ասել, որ նրանք ճիշտ միևնույն ժամադրն ու պատկերը չեն ներկայացնում: Եվ իրոք, եթե առաջինները պերակշիռ մաս են կազմում, ապա երկրորդները ոչ միայն սահմանափակ են. այլև ունեն յուրահատուկ դրսևորում. այն է՝ զգ նախդիրը հիմնականում բաղադրվել է միայն որոշ բաղաձայններով (բ, գ, մ, կ, փ, ք, մասամբ՝ ն, ժ, չ, տ) սկսվող արմատների ու բառերի հետ, ինչպես, օրինակ՝ զբաղվել, զգալ, զգայալ, զգոյշ, զգետնել, զգօն, զմրել, զմածել, զմայլանք, զկծել, զկնի, զնստել, զչարել, սթափվել<զ+թափվել, սթօղել<զ+թօղել, սփռել<զ+փռել, սփռիվել<զ+փռիվել, սփարել<զ+փարել, ստածել<զ+սածել և այլն:

Արդյոք զ-ի կիրառության սահմանափակումն այս դեպքում պատահական է, թե պայմանավորվում է լեզվական որևէ օրինաչափությամբ: Նկատի ունենալով թերևս հենց այն հանգամանքը, որ խուլերից կամ շնչեղ-խուլներից առաջ զգ-ն վեր է ածվել ս-ի, հաստատապես կարելի է ասել, որ նրա բաղադրությունն ու միաձուլումը ունեցել է որոշակի ու կայուն հիմք. այսինքն՝ այդ պրոցեսը տեղի է ունեցել միայն այնպիսի ձևերում, որտեղ զ-ի և դրան հաջորդող բաղաձայնի կապակցության համար ընձևովել է որոշ հնարավորություն, որով էլ հենց պայմանավորված նրա արտասանությունը որևէ դժվարություն չի հարուցել:

Կարծում ենք, որ նույն այդ հանգամանքով էլ հենց պետք է բացատրել Վեդ-ի հեշտ միաձուլումը ձայնավորների հետ և նրա անհարիր լինելը. ասենք, Ս, Ժ, Ջ, Դ, Ծ, Զ հնչյունների հետ, որոնք արտաբերման տեղով համընկնում են և բնականաբար չէին կարող Վ-ի հետ միասին (զս, զժ, զյ, զշ և այլն) անարգել արտասանվել:

Արդ, ինչպես է պատահել, որ Վեդ-ն ձևով է բերել բառակազմական արժեք. արդյոք բոլոր դեպքերում դա նրա իբրև նախդիրի գործածություն հետևանքն է, թե՛ ոչ: Նախդիրները, ինչպես անվանի հայագետ Ա. Այտընյանն է տեղին նկատել, Վեդերում մեծ ծառայություն ըրած և միանգամայն մեծ խաղ խաղացած են հայ լեզվին մեջ, որոնցմե հին լեզուն չուր ուշժն ու զեղեցկությունը կառնուր¹:

Այդ գնահատականը, պարզ է, որ հավասարապես վերաբերում է նաև Վեդ նախդրին, որ դրվել է թե՛ տրականի (եհար կամ զարկոյց զքարէ, զվիմի, զգետնի), թե՛ հայցականի (եցոյց նոցա զանօրէն զհախոյիչ զնիկանովրայ զգլուխն և զձեռնն), թե՛ բացառականի (պատմել կամ խօսել զմանէն) և թե՛ գործիականի (Շրջէր զկողմամբ ասիացւոց) վրա², տալով նրանց բազմազան նշանակություններ կամ թե չէ արտահայտելով այլևայլ հարաբերություններ:

Իայց նրա դերն, իհարկե, աչքանով չի ավարտվել. անմիջապես դրվելով հոլովական ձևերի վրա, մի շարք դեպքերում նա սկսել է ձուլվել նրանց. կազմելով աչքայիսի մի ամբողջություն: Բսկ սա էլ հենց նշանակում է, որ բաղադրված բառերում Վեդ-ն նախապես հանդես է եկել նախդրային նշանակությամբ և լեզվի զարգացման ընթացքում է միայն, որ աչք դերից դատ և նրա հետևանքով ձևով է բերել բառակազմական ինքնուրույն արժեք: Հետևաբար՝ վերջինս Վեդ-ի նախդրային կիրառություն անմիջական արդյունքն է ու հետևանքը, և միանգամայն պարզ է, որ նախդրային գործածության բացակայության դեպքում նրա բառակազմական արժեքի մասին խոսք լինել չէր էլ կարող:

Բսկ եթե աչք աչքայիս է, ապա ինչպե՞ս է պատահել, որ Վեդ-ն միացել է նաև աչքայիսի ձևերի, որոնց վրա, իբրև նախդիր, չէր կարող դրվել: Դրա լավագույն բացատրությունը գտնում ենք Մ. Աբեղյանի մոտ. «Դրաբարում,— գրում է նա,—կան նաև սակավաթիվ բայեր, որոնց սկզբից միացած կա մի նախդիր: Աչքայիսի բայերի մի մասը, սակայն, իսկական նախդրավոր բայեր չեն, այսինքն նախաբայի և բայի հարադրությամբ չեն կազմված, այլ նախդիրները նախ դրված են անունների վրա, և ապա նոր կազմվել են բայեր աչք նախդիր ունեցող անուններից»:

Այսպիսով, պարզ է, որ Վեդ-ի ձուլումը արմատներին և դրանց միացմամբ նոր բառեր կազմվելու պրոցեսը կատարվել են հիմնականում նախդրային գործածության ճանապարհով³: Ըստ որում թեև Վեդ-ն, իբրև լեզվի հին որակի տարր, հետագայում մեռել ու կորցրել է իր գործունեությունը, բայց, աչ-

¹ Ա. Այտընյան, Քննական բերականություն արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 87:

² Նոր բառադիրք Հայկադեան լեզուի, հատ. առաջին, էջ 709:

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 187:

⁴ Հնարավոր է, որ հնում Վ-ի հավելմամբ բառեր կազմված լինեն նաև անալոգիայի միջոցով:

նուամենայնիվ, որոշակի ավանդ է թողել հայերենի բառազանձի հարստացման գործում և մինչև այսօր էլ աչքի է ընկնում բառակազմական իր ներբնի դերով. մի դեր, որ շատ ավելի պարզորոշ կդառնա, եթե իր զարգացման ճանապարհին հայերենագիտությունը տա «զ»-ով սկսվող անստույգ բառերի ստուգաբանությունը¹, ըստ այդմ երևան հանելով նաև «դ»-ի և առանձին արմատների բաղադրության ոչ հայտնի ձևերը, որ բոլորովին էլ չեն բացառվում:

Եվ իսկապես՝ ս. հետազոտության ընթացքում նկատում ենք, որ «զ»-ով սկսվող բառաշարքում կան որոշ բառեր, որոնք ներբնի «դ» նախդրի ու առանձին արմատական ձևերի միացություն են կազմում և կամ թե չէ՝ նույն այդ պրոցեսի մի այլ դրսևորումն են հանդիսանում:

Այդ ելակետից էլ ահա սույն հոդվածում փորձ ենք անում կատարել մի քանի ստուգաբանական վերլուծություններ, երբեք էլ չհավակնելով պնդել, թե դրանք բացարձակապես ճիշտ են և ընդունելի բոլորի համար:

1. Զ ՈՒ Տ

Արմատիս ծագման մասին հայտնվել են մի քանի կարծիքներ, որոնցից և ոչ մեկը, սակայն, ընդունելի չէ: Եվ հենց այդպես էլ վարվել են Հ. Հյուբշմանը և Հր. Աճառյանը, ներկայացնելով այն որպես անստույգ բառ²:

Բայց մենք կարծում ենք, որ զուտ բառը կապվում է զատ<զ+հատ (անել) բառի հետ և պարզապես դրա մի տարբերակն է. այդ են հաստատում ամենից առաջ նրանց միջև եղած իմաստային սերտ կապն ու առնչությունը: «Զուտ» բառի համար ընդհանրապես նշվում են «պարզ, պարզեալ, մաքուր, սուրբ, անխառն, չինչ, սոսկ», «մաքուր», «անխառն»՝ զտված, որևէ օտար խառնուրդ չպարունակող, մաքուր³, իսկ զատ-ի համար էլ «Ձատեալ, որոշեալ, ընտրեալ, և որիչ. առանձին, մեկուսի, ուրոշ, ի բացեալ, հեռի», «կտրելը, հատուած, կտոր», «Ձատված, բաժան, ջուկ, առանձին»⁴ իմաստները:

Թեթևակի համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ դրանք գրեթե նույնական են, և երկու բառերն էլ ըստ էության միևնույն իմաստն են արտահայտում: Եվ դա ինքնին հասկանալի է, որովհետև «մաքուր, անխառն» կարող է լինել միայն այն ամենը, ինչ չի բաղադրված այլ մասերի հետ, և կամ թե չէ՝ այն ամենը կարող է կոչվել «մաքուր, անխառն», ինչ զատված, անջատված է այլ բաղադրիչներից և բացարձակապես ներկայացնում է սոսկ սովորյալ նյութի, իրի կամ մի այլ բանի ամբողջությունը:

¹ «Զ» սկզբնատառով բառ-արմատների վերաբերյալ ամփոփ ու լավագույն քննությունը կատարել է անվանի հայագետ Հ. Հյուբշմանը. նրա այդ ուսումնասիրությունը ժամանակին թարգմանվել ու հրատարակվել է «Հանդէս ամսօրեայ»-ում (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1907, թիւ 3, 6, էջ 183—187, այլև թիւ 8, էջ 218—249):

² Տես «Հանդէս ամսօրեայ», 1907, էջ 187 և Հո. Աճառյան, Արմ. բառարան, հատ. 2, էջ 992:

³ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 750:

⁴ Հո. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հատ. 2, էջ 992:

⁵ Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հատ. 2, էջ 37:

⁶ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 715:

⁷ Հո. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հատ. 4, էջ 157:

⁸ Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հատ. 2, էջ 10:

եւ ի հենց դրանով պետք է բացատրել, որ, օրինակ, վատ-ից ծագող վախը բառը գրաբարում իսկ գործ է ածվել «մաքրել» նշանակությամբ, որպիսին պահպանվում է նաև այժմ, և, որ կարևոր է, նշանակում է ոչ միայն «մաքրել», այլև դատել, անջատել, վախճել նշանակում է ոչ միայն մաքրող, այլև զատող, տարրեր մասերն իրարից հեռացնող, անջատող:

Ջատ-ից վաւտ-ի ծագման երկրորդ կարևոր հիմքն էլ այն ընդհանրությունն է, որ մենք տեսնում ենք նրանց արտաքին կողմի՝ ձևի միջև (հմտ. մաղդ-մուրդ, մանր-մուսր, ծակ-ծուկ և այլն). իսկ դա էլ հենց ենթադրել է տալիս, որ վաւտ-ն աւշդակի առաջ է եկել վաւտ-ի կրկնությունից (զատ-զատ > զատ-զուտ) և այն ժամանակ, երբ նա հնչեաւորուն բառալին արժեք է ստացել, չի գիտակցվել իբրև կրկնության բացառիչ:

2. 2 () Շ

Հայերենի անստույգ արձատներից մեկն է, որը գործ է ածվել նաև զոշ ձևով. Հայկազյան բառարանը թուի, ցած, զագիր, անարժան, ամօթալի, անամօթ, իմաստներն է տալիս և ծագած է համարում պարսկերեն զիշտ (زشت Zist «տգեղ, աղտեղի») ձևից¹: Հր. Աճառյանը գիտականորեն մերժում է այդ և դիտում իբրև անստույգ բառ, որ նշանակում է «վատ, վեշ, անպարկեշտ»²:

Արդ՝ հարց է ծագում. նույն այլ «զոշ» («զոշ»)՝ և կապ չունի՞ արդյոք յոշ (յոշ, այլև օշ) ձևի հետ, որ արտահայտում է «պատառ, կտոր, մաս» իմաստները (հմտ. յօշ-յօշ = պատառ-պատառ, յօշել = մաս-մաս կտրտել):

Հայագետները նրանց միջև ոչ մի դուգահեռ չեն անցկացրել և ամեն մեկը դիտել են իբրև առանձին արմատ, մինչդեռ մեր կարծիքով զօշ (զոշ)-ը ծագում է տակավին անստույգ յօշ (յոշ) ձևից՝ զ-ի հավելմամբ (զ + յօշ > զօշ), ճիշտ այնպես, ինչպես որ զօղ-ը ծագում է զ + յօղ-ից³, զոպ-ը՝ զ + փոպ-ից, զեղուլ-ը՝ զ + փեղուլ-ից, զատակ(ել)-ը՝ զ + յատակ(ել)-ից: Դա կարելի է հաստատել մի քանի փաստարկներով: Նախ՝ հենց այն հանգամանքը, որ թե՛ զօշ-ը և թե՛ յօշ-ը գործ են ածվել (թեևս հետնաբար) նաև զոշ և յոշ գրություններ, հավանապես են դարձնում նրանց միջև եղած կապը: Երկրորդ՝ այս դեպքում ևս առկա է ձևի խիստ ընդհանրությունը, որին ավելանում է զ-ի միացման ժամանակ չլ-ի անկման օրինաչափ երևույթը: Եվ վերջապես երրորդ՝ նրանց արտահայտած իմաստների միջև ո՛չ թե ինչ-որ հեռավոր կապ է նշմարվում, այլ կա որոշակի ընդհանրություն, որ շատ ավելի վառ երևում է զօշոտել և յօշոտել (յօշատել) ձևերի մեջ: Զօշոտել նշանակել է «Անյազ կացացանել զաշս որպես թէ պակշոտել. որսալ ի տես հեշտալի, կախարդել զտեսութիւն», իսկ երկրորդը՝ «Զօշելով հատանել. յօդ յօդ անդամ անդամ կտրատել, գիշատել, քալքալել»⁴:

¹ Երբ բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 711:

² Հր. Աճառյան, Հայերէն արձատական բառարան, հատ. 2, էջ 1008—1007:

³ Հր. Աճառյանը յօշ-ի արմատն է համարում օշ-ը (տես Արմ. Բառարան, հատ. 6, էջ 1600). Նկատի ունենալով, որ յօղ-ի կողքին հին մատենագրության մեջ գործ է ածվել նաև օղ ձևը (տես Առձեռն բառարան, էջ 842), պիտի բնորոշել, որ «յօղ»-ի արմատն էլ օղ-ն է:

⁴ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 758:

⁵ Անդ, հատ. 2, էջ 381:

Լնդհանրությունը հանդերձ երկու ձևերն աշխուսմանակալիվ իմաստապետ չեն նույնանում: Եվ դա բնական է, որովհետև լեզվի ձևերը ձևեր են, որոնք չեն կարողանում իմաստապետ լինել: Երբ հանդերձ լեզվի ձևերն աշխուսմանակալիվ իմաստապետ չեն նույնանում, ի տարբերություն առաջինի, մենք էլ հետաքննում: Ինչպես որ մենք էլ հենց ինքը՝ «լեզու» ձևը:

3. Ձ Բ Օ Ս

Արմատական բառարանի վկայությամբ, իբրև առանձին արմատ, անգործածական է. դրանից կազմված են զբոսանալ, զբոսանիլ կամ զբոսանում ձևերը, որ նշանակում են «մի զուարճալի բանով ժամանակ անցկացնել»:

Արմատիս ծագման վերաբերյալ հայտնվել են տարբեր կարծիքներ. ոմանք համեմատել են պարսկերեն, իսկ ոմանք էլ՝ հունարեն որոշ ձևերի հետ: Բայց պետք է ասել՝ նրանից ոչ մեկն էլ հիմնավոր չէ, և այդ պատճառով էլ ստուգաբանության մեծ գիտնականները՝ Հ. Հյուբշմանը և Հր. Աճառյանը չեն ընդունել և ոչ մի բացատրություն և այն դասել են չստուգաբանված արմատների շարքը:

«Զ» նախդրի բառակազմական արժեքը քննելիս, սակայն, մեզ սխեմա հուզել այն միտքը, թե արդյոք զբոս-ի մեջ ևս լեզվի ստուգական մասնիկ չէ և եթե իրոք այդպիսին է, ապա այդ դեպքում ինչ է իրենից ներկայացնում «բոս» արմատը:

Եկատի ունենալով այն հանգամանքը, որ զբոս-ը գործ է ածվել նաև զբոսա, սբոս և սբուս ձևերով¹, կարծում ենք, որ «բոս»-ն առնվում և հետևաբար ծագում է բոյս արմատից, որն էլ իր հերթին սերում է ժնհւ. bheuə, bhū-արմատից, որի առաջին և հիմնական նշանակությունն է «աճել, մեծանալ»:

Մեր համոզումը ավելի է մեծանում ու խորանում, երբ տեսնում ենք, որ հնդեվրոպական տարբեր լեզուներում այն ստացել է այլևայլ նշանակություններ, ինչպես՝ ալբան. bin «աճել», buj «բնակիլ, օթևանիլ», իրանյան, սլավ. բալթիկ, գերմանական և լատինական լեզուների մեջ էլ՝ «լինել, գոյ» հմտ. սանս. bhāvati «է, կլինի», պրս. būd «էր», bū-dan «լինել», հիու. buith «լինել», бой «եղավ», հու. byti, լիթ. buti, ուս. бытъ «լինել», անգլ. be «լինել» և այլն²:

Եվ եթե իսկապես ճիշտ են այդ բոլորը, և մինչև անգամ հնի. bheuə, bhū արմատը կարող է օժանդակ բալի իմաստ արտահայտել, ապա ինչու է չի կարելի խելքին մոտ համարել «բոյս»-ից բոս-ի ծագումը, մանավանդ որ զբոսանել-ի մեջ, թերևս աղոտ ձևով, նշմարվում են հիմք-արմատի բուն նշանակության հետքերը. լեզվի ձևերը չեն կարողանում իմաստապետ լինել, ինքնին ստուգացրել է նրա նշանակությունը, աճել. մեծանալ-ը դարձնելով «ժամանակ անց կացնել»:

¹ Հո. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 917:

² Հր. Աճառյանը իրավագիտորեն զրույթյան տարբեր ձևերը ստուգաբանության համար կարևոր գործոն է համարում:

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 1156-1157:

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, անգլ:

Նշանակում է՝ իմաստային հեռավոր նմանությունը ոչ թե բացասում, այլ հաստատում է երոյս-ից երոյս-ի ծագումը, միաժամանակ ցույց տալով, որ զ-ի ձուլումը դրա հետ տեղի է ունեցել վաղնջական ժամանակներում, ըստ որում եթե հեռավոր անցյալում նա հանդես է եկել սոսկ իրրե սաստկական մասնիկ, ապա հետագայում, բառիմաստի փոփոխությունը պայմանավորված, սերտորեն ձուլվել է երոյս արմատին, գիտակցելով դրա հետ միասին իրրե մի ամբողջական արմատ:

Եվ վերջապես, կասկած է առաջ գալիս, արդյոք այդ երոյս-ը նույնը չէ, ինչ որ բորբոս-ի բու-ը, կամ թե չէ՝ բորբոս բառը չի կազմված պարսկերենից փոխառյալ բոր-ից + բու, գծվարանում ենք պնդել, թեև այնպիսի մի հեղինակավոր բառարան, ինչպիսին Հալկապանն է, այն լծորդակից է համարում հենց բոր, բոյս, ձևերին¹:

4. Ս Ք Ա Ն Չ

Արմատական բառարանում դա ևս դիտվում է իրրե անստույգ բառ, որ նշանակում է ճերաշք, հրաշալի բան²։ Ինչպես մյուս, այնպես էլ այս դեպքում մեծ լեզվաբանը ի մի է բերում արմատիս ծագման վերաբերյալ հայագետների հայտնած կարծիքները, որոնց մեջ, սակայն, խիստ ուշագրավ է Ա. Մեյլեի (Meillet) տեսակետը, որ ծագած է համարում Վ < զ սաստկականույ թանց արմատից³:

Որ իսկապես սրանց-ի մեջ ս-ն եզր սաստկականն է, շնչեղ-խուլից առաջ դարձած Ս (հմտ. զ + փոխել > փոխել, զ + թափել > թափել, զ + քոզել > քոզել և այլն), դուրս է որեք կասկածից: Ինչ վերաբերում է թանց-ին, ապա պետք է ասել, որ դա բուլղորովին էլ մի ամբողջական արմատ չէ, այլ կազմված է քան + չ-ից, որոնցից առաջինը ինքնուրույն արմատ է և նշանակել է ճշտի, որչափ լինելը (հմտ. քանի, քան, ինչքան, որքան, այսքան և այլն), իսկ երկրորդն էլ այլ բան չէ, քան նրան կցված եզր նախդիրը (հմտ. քանզ, քանց), որ տարնաման օրենքով դարձել է զ, այսինքն՝ նախապես եղել է քան, ապա՝ քանզ, հետո զ + քանզ > ս + քանց, որից էլ կազմվել են բազմաթիվ բառեր, ինչպես՝ սքանչանալ, սքանչացումն, սքանչելագեղ, սքանչելագոյն, սքանչելի և այլն և այլն:

Եվ հենց այն հանգամանքը, որ քան-ը չափի, որչափ լինելու իմաստ է արտահայտել և մինչև այսօր էլ նրա միջոցով որոշվում է առարկայի հատկանիշի աստիճանը (հմտ. մեծը լավ է, քան փոքրը = մեծը փոքրից լավ է, վարդը գեղեցիկ է, քան մանուշակը = վարդը մանուշակից գեղեցիկ է), ցույց է տալիս, որ սքանչ-ի հիմքում ի վերջո ընկած է քան արմատը, որի և մյուսի իմաստային ընդհանրությունը խիստ ակնյայտ է:

Եվ այնուհետև. Ստ. Մալխասյանցի ճշգրիտ բացատրական բառարանում բերվող «քանչեցնել» (ճշտիազանց գովել, բարձրացնել) ձևը⁴ ևս,

¹ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 507:

² Հր. Անառյան. Հայերեն արմատական բառարան, հատ. 6, էջ 100:

³ Անդ:

⁴ Ստ Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան, հատ. 4, էջ 547:

կարծում ենք, լավագույն ապացույց է այն բանի, որ «սքանչ»-ի մեջ, իրոք, $u > q$ -ն սաստիական մասնիկ է, իսկ արմատն էլ հենց «քան»-ն է:

5. Ձ Ա Մ Բ ի Ձ Ա Մ Պ

Արմատացան բառարանում ներկայացվում է իբրև առանձին արմատ՝ «լեռների վրա դիզված ձյունը» նշանակությամբ¹: Նույն բացատրությունը Ստ. Մալխասյանցն է տալիս, միայն այն տարբերությամբ, որ «զամբ»-ի տակ հիշատակում է նաև հետևյալ իմաստը. «Ջրադացի քարերի շուրջը նստած ալյուրի փոշի, որ հավաքում և շների համար հաց են թխում»²:

Մի կողմ թողնելով այն, թե վերջին իմաստով գործածվող զամբ-ը կապվում է առաջինի հետ թե ոչ, կարծում ենք, որ այս դեպքում ևս մենք ոչ թե ինչ-որ առանձին արմատի, այլ ուղղակի $q + \text{ամբ}$ (կամ $q + \text{ամպ}$) ձևի հետ գործ ունենք: Եվ իրոք, երկու անվանի լեզվաբանների կողմից զամբ (զամպ) բառին տրված բացատրությունը սերտորեն կապվում է ամպ բառի իմաստի հետ:

Մթնոլորտի մեջ խտացած գոլորշիների կույտը լինելով, ամպը, ինչպես հայտնի է, նստում է մեծ մասամբ լեռների ու սարերի վրա և եթե հաճախ՝ անձրև, ապա որոշ դեպքերում (մանավանդ բարձր գագաթների վրա) ձյուն է բերում: Այստեղից էլ հետևում է, որ զամպ-ը հենց ամպ-ի սաստկացած ձևն է, որ լայն տարածում ունի հատկապես ժողովրդական լեզվում (հմտ. ամպ ու զամպ. Աշնան ամպին ու զամպին, Հ. Թումանյան, Երկրի ժողովածու հատ. 1, էջ 208), և հետևաբար՝ չպիտի դիտվի ինքնուրույն արմատ:

6. Ձ Մ Ա Յ Լ

Սրա ծագման մասին նույնպես հայտնվել են տարբեր կարծիքներ. ըստ որում Յովհ. Գազանճյանը զ-ն նրա մեջ ուղղակի արմատական տարր է համարել³: Մինչդեռ ժողովրդական լեզվում գործածական հայիլ մայիլ մնալ, մայիլ մնալ և այլն, ձևերը ենթադրել են տալիս, որ զ-ն բնավ էլ արմատի մաս չէ, այլ սաստկական մասնիկ է, որ դրվել է մայիլ-ի վրա, տալով դրան մի նոր նշանակություն:

Արդ, հարց է ծագում. եթե այդ այդպե՞ս է, ապա ի՞նչ ծագում ունի մայլ ձևը. դա, կարծում ենք, կարող է առաջ եկած լինել միայն երկու ճանապարհով. կամ՝ ծագում է պաշլավերներից փոխառյալ humay ձևից, որի արմատն է maya «օրհնություն, երջանկություն»⁴ և կամ էլ՝ հայիլ (սնայիլ) բայի կրկնակից (հմտ. հայիլ-մայիլ):

Եթե ճիշտ է առաջինը, ապա զմայլ-ը առաջ է եկել $q + \text{հմայ} > q + \text{հմայլ} > q - \text{մայլ}$ (լ-ն աճական է) ընթացքով, մի բան, որի հավանական լինելու

¹ Հո. Անադյան, Հայերէն արմատական բառարան, հատ. 2, էջ 890:

² Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հատ. 2, էջ 6:

³ Տե՛ս նաև՝ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 191:

⁴ Տե՛ս «Արեւելյան Մամուլում» (1902) նրա «Նախդր—մասնիկներ» հետաքրքիր նոգվածը (էջ 73—77):

⁵ Հո. Անադյան, Հայերէն արմատական բառարան, հատ. 1, էջ 331:

մասին է վերաբերում համայնականության խնդրին՝ մասնավորապես՝

Իսկ եթե ճիշտ է երկրորդը, ապա պետք է ասել, որ նա առաջ է եկել հայն-մայն $\geq$ գ + մայն $\geq$ գ + մայն $\geq$ գ + մայն (որից պարզվել է ընթացքով, մի բան, որի համահայեցակցությունը ապացուցված է, հայն $\geq$ մայն է, որը ոչ թե հայն-ի կրկնակն է, ինչպես կարծում է Ստ. Մալխասյանցը, այլ մայն-ն է, որ ծագում է հայն-ից (համա. հայ-մայ, հեռանալ-մեռանալ, հոգ-մոգ և այլն):

Բայց անկախ այդ բոլորից էլ մայն $\geq$ մայն $\geq$ մայն $\geq$ մայն (որից պարզվել է ընթացքով, մի բան, որի համահայեցակցությունը ապացուցված է, հայն $\geq$ մայն է, որը ոչ թե հայն-ի կրկնակն է, ինչպես կարծում է Ստ. Մալխասյանցը, այլ մայն-ն է, որ ծագում է հայն-ից (համա. հայ-մայ, հեռանալ-մեռանալ, հոգ-մոգ և այլն):

7. Չ Ե Ղ Ծ

Հայագետ-լեզվաբանների կողմից վաղուց արդեն ապացուցված է, որ զեղծ բառի արմատը եղծն է (նշանակում է՝ «տան, անշուք, խանգարված», «շինծու», «վատ», «պակասավոր» «հերքում»), իսկ զ-ն ստացված է մասնակցից է. ուստի դա որևէ նոր հիմնավորման կարիք չի զգում, և մենք այստեղ այդ ձևին անդրադարձնում ենք մի այլ նկատառումով. այն է՝ նույն այդ եղծ արմատը ընկած է ոչ միայն զեղծ, այլև կեղծ (նշանակում է՝ «շինծու», «վատ», «պակասավոր» «հերքում») բառի հիմքում:

Այդ մասին կա հայկազյան բառարանի հիշատակությունը, որ լծորդակից է համարում եղծ, կեղծ ձևերին: Մինչդեռ դա, որ զարմանալի է, Հր. Աճառյանը չի ընդունում³, թեև եղծ, կեղծ, այլև զեղծ բառերի ինչպես իմաստային, այնպես էլ ձևային ընդհանրություններն ինքնին ցույց են տալիս ու հաստատում, որ եթե մի գեպում զ-ի և եղծ-ի գումարը տվել է զեղծ, ապա մյուս գեպում էլ կ-ի և եղծ-ի գումարից ստացվել է կեղծ բառը: Վերջինիս ձևով է կազմված նաև կեղտ բառը (նշանակում է՝ «աղտ, անմաքրություն»), որը ծագում է աղտ արմատից կ-ի հավելմամբ—կ+աղտ $\geq$ կ+եղտ $\geq$ կեղտ: Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ այն է, որ մի շարք բարբառներում աղտ-ի և կեղտ-ի դիմաց գործածական են եխտ (Ագուլիս), յեղտ (Գորիս), յեխտ (Ջուղա), յեխտ (Դարբաս) և այլն, ձևերը:

Այսօրինակ էլ հետևում է, որ կեղծ և կեղտ բառերը առանձին արմատներ չեն⁴, ուստի նրանցից մեկը պետք է կապել եղծ, իսկ մյուսը՝ աղտ արմատի հետ:

¹ Համա. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի ակադեմիան, էջ 191:

² Նոր բառադիրք Հայկազան լեզուի, հատ. 1, էջ 1082:

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 3, էջ 1132—1133:

⁴ Այդ երկու օրինակների հիման վրա կարելի է հաստատապես պնդել, որ «կեղտ» հավելմամբ ևս հայերենում կազմվել են նոր բառեր. դա հատկապես տեղի է ունեցել կենդանի խոսվածքներում և հենց դրանով էլ պետք է բացատրել, որ կեղծ բառը, ինչպես Հր. Աճառյան է վկայում, առանձին չի գործածվում հին լեզվի մեջ (Արմ. բառ., հատ. 3, էջ 1132): Մեր կարծիքով նման օրինակ է նաև կուցուր (կուցոր) բառը, որը առաջ է եկել պուցուր ձևից՝ պ-ի անկմամբ և գ-ի հավելմամբ: Պուցուր բառն էլ պետք է ասել, այլ բան չէ, քան փոքր բառի մի տարրերակր, որ նախորդի պես ծագում է հնթ. *puhku* ձևից (տես Սրմ. բառարան, հատ. 3, էջ 1311—1313): Նույն ձևով է կազմված նաև կոզնի (կ+ոզնի) բառը՝ Դարբասի բարբառում՝ ոզնի-ի դիմաց:

8. Ձ Ր Ո Յ Ց

Ոմանք զրոյց բառի «դ»-ն ևս գիտեի ևն իբրև նախդիր, ըս մասը կապելով կա՛մ ԴԱ արմատի (գոթերեն *rūna* — զաղտնիք, լիթ. *rūnat* — «խօսիլ» և այլն) և կա՛մ թե չէ՝ իր (բրան) բառի գործիական (իմա՛ — պարսոական) հոլովածի հետ: Սակայն զրանցից ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը ոչնչով հիմնավոր չեն, և դա ալն պարզ պատճառով. որ «զրույց»-ի մեջ «դ»-ն աննշան չափով անգամ զգացնել չի տալիս իր առանձին բաղադրիչ լինելը. ուստի դրան հակառակ կարծում ենք, որ զրոյց-ը պարզապես ածանցավոր մի բառ է, բաղադրված զր—ույց < զուր + ոյց մասերից: Իրա համար կարևոր հիմք է ծառայում ալն, որ փոխառյալ զուր (սփուշ, պարապ, պարապ տեղը) բառը հենց պահպանվելու է (زور — *Zūr*), պարսկերենում (زور — *Zūr*) նշանակել է սուտ, ստախոսություն, զենդերենում (زور — *Zūr*)՝ «զուր», իսկ արաբերենում, որին անցել է իրաներենից, (زور — *Zūr*), ուղղակի նշանակում է սուտ խոսք, ունայն, սինա:

Այդ իմաստները հայերեն «զրույց» բառի նշանակությունների («խօսք. տարաձայնություն, խոսակցության առարկա, լուր, հին պատմություն» — Հր. Աճառյան, Արմատական բառարան, հատ. 2, էջ 1003, «Ասացուած, վէպ, պատմություն, ճառ, խօսք, առակ, խոսակցություն, համբալ, լուր» — Հայկազյան բառարան, հատ. 1, էջ 753) համեմատելիս, գտնում ենք ընդհանրության խիստ եզրեր. ամենայն հավանականությամբ հայերենում նա նույնպես արտահայտել է սուտ խոսքի, ստախոսության իմաստը և կապվել է «ունայն, պարապ ժամանակի հետ, որի ընթացքում էլ կա՛մ ասվել է այդ սուտ խոսքը և կա՛մ թե չէ հաղորդվել է որևէ լուր, համբալ: Մինչև այսօր էլ, պետք է ասել, որ «զրույց» բառի մեջ պահպանվում են այդ իմաստի վերապրունները. ինչպես՝ «Ազատ ժամանակ չունես, գնանք զրույց անենք», «Ոչինչ չի անում, զրույցով է զրաղվում» և այլն:

Ինչ վերաբերում է բայական ծագում ունեցող «ոյց» ածանցին, ապա պետք է ասել, որ դա զուր բառին է ձուլվել կամ անալոգիալով (հմտ. սառույց, հանգոյց, զեկոյց և այլն) և կամ թե չէ, հավանաբար, գործածական են եղել զուր-ից կազմված որոշ բայական ձևեր, որոնցից էլ առաջ է եկել հենց զրոյց բառը*:

* Տե՛ս Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 1004:

2 Անդ, էջ 993:

* Ոգտվելով առիթից, փորձ ենք անում տալ վարագոյր բառի տոնոգրաֆական հետևյալ վերլուծությունը. երկար ժամանակ մեզ հուզում էր այն միտքը, թե արդյոք վարագոյր-ը վար (վայր) — ա — զոյր մասերից կազմված բարդ բառ չէ և եթե՛ այո, ապա զոյր-ը ի՞նչ է և չի՞ կապվում սն — զոյր, ողջ — ա — զուր — ել, զուր — զուր — ել բառերի զոյր (զուր < զոյր) — ի հետ: Արմատական, ինչպես նաև այլ բառարանների տվյալներն ու վերլուծությունները մեզ բերեցին այն համոզման, որ զուրահեռ ձևերի միջև շատ ընդհանուր դժեք կան. նախ՝ ի՞նչ ենք, որ հենց ինքը՝ Հր. Աճառյանը ողջագուրել և զուրգուրել բառերի զոյր-ը նույնն է համարում (Արմ. բառ., հատ. 2, էջ 330), որը, մեր կարծիքով, նույնն է նաև վարագոյր և սնգոյր բառերի զոյր-ի հետ: Ինչպես սնգոյր բառը կազմված է *Sag + angūr* (سگ Sag «շուն» — انکور angūr «խաղող» (Արմ. բառ., հատ. 6, էջ 301—302), ողջագուրել-ը՝ ողջ (առողջ, կենդանի) + ա + զոյր + ել, զուրգուրել-ը՝ զոյր + զոյր և (սիրել, վրան խանդաղատի) մասերից, այնպես էլ վարագոյր-ը բաղադրված է վար < վայր և զոյր արմատներից, որոնք միացվել են «ա» չոդակապով: Այստեղ առաջին ու

Վերևում տրված ստուգաբանական վերլուծություններով, անշուշտ չեն սպառնում ՏԳԾ-ով բաղադրված այն բառերը, որոնք գեղես մեկնաբանման կարիք են դրում. ամենեկին:

Հայկադյան, ինչպես նաև այլ բառարանների տվյալների հիման վրա թերևս նրանց շարքը կարելի է դասել, օրինակ, զնին >զ + քնին, զիստ >զ + նիստ, դատիկ <զ + հատ + իկ (հմմտ. հատ—հատիկ) բառերը: Իսկ եթե դրան էլ ավելացնենք այն, որ ՏԳԾ-ով սկսվող բառաշարքում մի շարք բառեր տակավին անսուղ են, և նրանց մի մասի մեջ (ինչպես, օրինակ՝ զուսլի, զեղի, զեղջ, զեղչ, զուսլ, զօտ և այլն), ամենայն հավանականությամբ ՏԳԾ-ն նախդիր է եղել, ապա շատ ավելի պարզ կդառնա նրա հսկայական դերն ու արժեքը բառակազմության գործում: Ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ հենց Հայկադյան բառարանում ՏԳԾ-ի տակ բերվող թվով 1050 բառերից մոտ կեսի (470) սկզբնատառը ՏԳ նախդիրն է, ինչպես զականել, զաղփաղփուն, զայրագին, զայրացկոտ, զայրացումն, զանգիտանալ, զանխանալ, զանցաւանման, զսուամ, զառանցանք, զառիվերակ, զատանալ, զարգանալ, զարթիւն, զարթուցիչ, զարհուրելի, զարմ, զարմանալի, զարտուղի, զրադանք, զգաստ, զգայուն, զգօն, զգոյշ, զգուշալի, զեկուցումն, զեռալ, զետեղի, զկծել, զօդ և այլն և այլն¹:

Այսպիսով՝ պարզ է, որ ՏԳԾ-նախդիր և առանձին արմատների ձուլմամբ կազմվել են հարյուրավոր բառեր, որոնց շնորհիվ նույնպես համարվել է հայերենի բառագանձը, հարստացել հայոց լեզուն: Իայց, ինչպես նշել ենք, հայերենի բառակազմական այդ ուղին իր երկարաձիգ ու հետաքրքիր պատմությամբ հանդերձ սահմանափակվել է որոշ շրջանում և դադարել գործելուց՝ զրաբարի մահացման հետ մեկտեղ ու նրան զուգընթաց:

Իայց դա իհարկե չի նշանակում, թե հետագայում բառակազմության

դորավոր կոմանն այն է, որ զոյլ-ը բոլոր դեպքերում արտահայտում է ծածկել, փակել նշանակությունը (հմմտ. սնդուրվել—չպարվել, վարագուրել—ծածկել, անջրպետել, ողջագուրել—մարմնով փաթաթվել, փաթաթվելով համբուրել, զուրջուրել—փաղարշել, փայփայել):

Հիմք ընդունելով ու ճիշտ համարելով մեծ հայադեռի մեկնաբանությունն այն մասին, որ սկզբնական Տօգ + անցւ-ից, որը (դրա կրճատ ձևն է՝ *San-gur), շնխաղողի ընտանիքին պատկանող մի բույս է և որի խիստ կարմիր դույն ունեցող արմատից հին ժամանակ մի տեսակ նյութ էր պատրաստվում, որով կանայք ներկում էին իրենց երեսը (Արմ. բառարան, հատ. 6, էջ 302), առանց սխալվելու կարելի է ասել, որ դրանով պայմանավորված Տօգոյր-ը սկսել է նշանակել ծածկել փակել, անջրպետել: Եվ այդ իմաստով էլ նա անցել է հայերենին և եթե, ասենք, զուրջուրելու ձևում, որ հին մատենագրության մեջ ավանդված չէ, (Արմ. բառարան, հատ. 2, 330), ձեռք է բերել փափկացուցիչ նշանակություն, ապա վաղուցվոր բառում հանդես է եկել հենց «ծածկել» նշանակությամբ. ուրեմն, վաղուցվոր նշանակել է այն շորը, որ վայր է ձգվել, մի բան անջրպետել, ծածկել մյուսից, կամ ինչպես Հայկադյան բառարանն է բացատրում՝ «ծածկոյթ վերստ ի վայր կամ ի վերայ աղուցեայ», հատ. 2, 78):

Իսկ թե ինչու վաղուցվոր բառի առաջին բաղադրիչը վայր-ի փոխարեն գործ էածվել վայր ձևով, պետք է բացատրել միայն յ-ի անկմամբ, որ տեղի է ունեցել նախադրարարյան շրջանում, և այդտեղից էլ հենց վաղուցվոր ձևն է մուտք գործել հայ հին մատենագրության մեջ:

¹ Ստուգաբանական նկատառումներով ինչպիսիս այն, այնպես էլ այլ դեպքերում պահպանում ենք բառերի ավանդական ուղղագրությունը:

այդ պրոցեսը լրիվ կորցրել է իր արժեքն ու նշանակությունը. բոլորովին «Ջ»-ով բաղադրված բառերը հայերենի զարգացման ողջ ընթացքում կրել են զգալի մակընթացություններ ու տեղատվություններ, անցնելով որոշակի տեղաշարժերի բովով:

Նախ՝ նկատելի է, որ մի շարք ձևեր, որոնք համեմատաբար ուշ շրջանի կազմություններ են և օրգանապես չեն ձևավորվել, չեն փոխանցվել ժամանակակից հայերենի բառային կազմին. դրանցից են, օրինակ, գանգիտանալ, գգնալ, գգայոել, գանխանալ, գանխանք, գաչաղել, գաչացու, գառաջատուն, գիրարել, գկծել, գինչպէտ, գկծանք, գմաածութիւն, գչարանալ և այլն, որպիսիք Ստ. Մալխասյանցի բառարանում իրավացիորեն գիտվում են իբրև հին՝ նշանակություն ունեցող կամ հազվագեղ գործածվող բառեր:

Երկրորդ դրանց հակառակ էլ այն բառերն ու բառաձևերը, որոնցում «գ»-ն շատ ավելի վաղուց է ձևավորվել արմատին և դարձել մի տեսակ նրա անբաժանելի մասը. անցել են հայերենի բառակազմի բոլոր շերտերով և այսօր էլ նրա մեջ իրենց ուրույն տեղն են բռնում. հիշենք դրանցից մի քանիսը. գայրագիմ, գայրանալ, գ սյրացկոտ, գայլոյք, գառամ, գառանցանք, գառ ի թափ, գառ ի վայր, գառ ի վեր, գատ, գատել, գարգա ալ, գարգացումն, գարդ, գարդարանք, գարդասէր, գարդարել գարթնանալ, գարթուն, գարկ, գարհուրագին, գարհուրել, գարհուրելի, գարտոլի, գարմանալ, գարմանք, գրւղկոտ, գգալ, գգայական, գգայարան, գգայուն, գգատ, գգացումն, գգեստ, գգոյշ, գգուշ սրար, գգուշալի, գգուշաւոյ, գգօն, գերդ, գեկուցումն, գեղծ, գեղծել, գեռալ (եռ ու գեռ), գեռուն, գետեղել, գերծ, գիջումն, գմայլանալ, գով, գովային, գովարար, գովություն, գրկել, գուրկ, գօղ, գօղել, ժուժկալ, սփռել և այլն և այլն:

Այսքանից, սակայն, սխալ կլինի եզրակացնել, թե իբր գնալով նվազել են «գ»-ով բաղադրված բառերը հայերենի ընդհանուր բառային կազմում. ինչպես մյուս, այնպես էլ այս դեպքում, պետք է ասել, լայն չափով գործի են դրվել հայերենի բառակազմական հարուստ միջոցներն ու հնարավորությունները. այն է՝ «գ»-ով բաղադրված կենսունակ տարրերից բարդությունն ու ածանցման ճանապարհով կազմվել են բազմաթիվ նոր բառեր, որոնք ոչ միայն ծածկում են հնացած ու գործածությունից դուրս ընկած բառերի պակասը, այլև զգալապես դերազանցում են այն:

Այդ է հաստատում, թերևս, Առձևոնի և Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանի համապատասխան տվյալների համեմատությունը: Վերջին բառարանը Առձևոնի բառերի հետ մեկտեղ ընդգրկում է նաև մի շարք նոր բառեր, որոնք մեծ մասամբ բարդություններ են, իսկ սա՛յով դեպքերում՝ ժողովրդական ձևեր. գահահար, գահահարել, գահանդելի, գամալ, գանցառու, գանցառություն, գանցանք, գառ մյալ, գառամել, գատ կել, գատընտիր, գալընտրություն, գարդագի, գարդագործ, գարդագործություն, գարդախուց, գարդանկար, գարդապատկեր, գարդաշար, գարկերակ, գարկերակային, գարկվածք, գարմանահար, գարմացկոտ, գարմլի, գարմուհի, գարտուղեցնել, գրալմունք, գրոսահանդես, գրոսանալ, գրոսանոց, գրոսաշրջիկ, գգալարար, գգալիորեն, գգայականություն, գգայանոց, գգայապաշտ, գգա-

¹ Հիշենք թերևս այն փաստը, որ «Հայ-ռուսերեն բառարան»-ում (1947) «գ» տառի տակ բերված 548 բառերից 219-ի սկզբնատառը հենց երրեմնի «գ» նախդիրն է:

յաւաշտութիւն, զգայասեր, զգայարանք, զգայացունց, զգաստարան, զգաստացումն, զգացմունք, զգացողութիւն, զգեստասեր, զգուշալորութիւն, զեկուցագիր, զեղծարար, զեղծարար, զմայլանք, զմայլուն, զովաշունչ, զովասուն, զովալուր, զտարան, զողիչ, զողում, սփռոց, սփոփել, սրանկալատում և այլն,— ահա համառոտ ցանկն այն բառերի, որոնք բացակայում են Առձեռնում, բայց տեղ են գտել բացարարականում¹։

Բայց այստեղ պետք է նկատի ունենալ և այն, որ առաջին բաղադրիչից բացի զգա-ով կազմված բառերը հանդէս են եկել նաև բարդութեան վերջում. ըստ որում այդ ձևով բառեր են կազմվել ոչ միայն նախադրարարյան ու դրարարյան, այլև հետագա շրջանում։ Եւ իրո՛ք, դարձյալ համեմատութեան կատարելիս, հնուց եկող բարդութիւնների կողքին, ինչպէս, օրինակ՝ մորթազերծ, անզգայ, անզգոյշ, հոգեզարդ, հրազարդ, հրազեփստ, քաջազարմ, քաջազեկ, իրազեկ, ինքնազարդ, ինքնազգեստ, ինքնազարթոյց, մարմնազեղծ, լուսազարմ, խաւարազգեստ, մահազեկոյց, անուագայազարդ, մարրազգեստ, մեծազարդ, մեծազարմ, մթազգած, մշտազեղ, մօտազգաց, յանկարծազեղ, ևնորազգեստ, ծաղկազարդ և այլն, կողքին կազմված ենք տեսնում բազմաթիւ նոր բառեր, որոնք հասկանալի պատճառներով բացառված են Հայկազան ու Առձեռն բառարաններում։ Դրանցից են, օրինակ, մտազբաղ, կամսզուրկ, ձայնազուրկ, նախազգուշացում, քանդակազարդ, պատկերազարդ, նկարազարդ և այլն, որոնք անուղղակի կերպով, մի այլ կողմից երևան են հանում այն մեծ դերն ու նշանակութիւնը, որ խաղացել է զգա երբեմնի նախդիրը հայերենի բառապանծի հարստացման գործում։

ՇՁ-ով բաղադրված բառերի շարքում կատարված տեղաշարժերը, սակայն, ոչ միայն առանձին ձևերի խունացման և բազմաթիւ բառերի աճման, այլև բառիմաստի փոփոխութեան ուղղութեամբ են ընթացել։ Հնագուէն ժամանակներից, երբ հայերենում սկսել է գործել զ-ով և առանձին արմատներով նոր բառեր կազմելու օրենքը, ինքնին առաջ են եկել իմաստային տարբերակումներ և բնականացումներ դուրսհան ձևերի միջև։ Եւ այլ կերպ լինել չէր էլ կարող. քանի որ լեզվի մեջ ոչինչ ավելորդ չի ստեղծվում և ամեն մի տարր կյանքի է կոչվում որոշ նպատակով, ապա նույն ձևով էլ զգա-ի ձուլումն առանձին արմատների տեղի է ունեցել անհրաժեշտարար, լեզվի ներքին պահանջով ու թելադրանքով. այսինքն՝ նա հանգես է եկել իրեն նոր դաստիարակներ, նոր նշանակութիւններ ու հասկացութիւններ արտահայտելու միջոց և, պետք է ասել, լիովին արդարացրել է իր հետապնդած նպատակը։

Իսկ դա, իհարկե, չի կատարվել միանգամից կամ անմիջապէս և ոչ էլ զգա-ն զրկելով արմատի վրա՝ սկզբից եկթ փոխել է դրա իմաստը և առաջ բերել, ասենք, միանգամայն տարբեր մի բան. բոլորովին։ ՇՁ-ի և արմատի ձուլմամբ նոր բառեր են կազմվել աստիճանաբար ու կիրառութեան երկարատև պրոցեսի հետևանքով. և հենց նման հանգամանքներում է, որ զգա-ով բաղադրված ձևերը սկսել են իմաստով ավելի ու ավելի հեռանալ բուն արմատներից. ըստ որում զգա-ն, զրկելով արմատների վրա, նախապէս ուղղակի սաստկացրել է նրանց արտահայտած իմաստը և հետագայում դրա հիման վրա միայն նոր նշանակութիւն է տվել նրանց, մեծ մասամբ, ինչպէս պրոֆ.

¹ Բերված օրինակներում երբեմն հիշատակել ենք նաև այնպիսի բառեր, որոնք մեր կարծիքով կազմված են նույնպէս զ-նախդրից ու որեւէ արմատից։

Մ. Արեղյանն է նկատել, ֆիզիկական նշանակութիւնը Կոնսենզուս բարոյականի:

Հաստատենք այս միտքը մի քանի օրինակներով. զայրացալ բառը, որ ծագում է այլ - ել-ից, չի նշանակում այլևս զհրով կիզուլ տոչորել և ծախել կամ հրձիգ առնել, հրդեհել^ա, զվառել^բ, այլ նախապես նշանակել է ստաքանալ, բորբոքել^գ (սկսած իշխանք զայրանալ ի գինւոյ^դ)^ե, իսկ ափնահտե ձեռք է բերել սաստիկ բարկանալ, կատաղել, կրակ կտրել^զ նշանակութիւնը: Եմանապես՝ զիջել-ը և իջնել-ը տարբեր իմաստ արտահայտող տարբեր բառեր են, բայց վաղ շրջանում նրանց իմաստային տարբերութիւնը խիստ աննշան է եղել. իջանել (^ը իջնել) նշանակել է ժի բարձր տեւձող է ի վայր կամ ստոր գալ՝ երթալ, հոսել^զ, իսկ զիջանել (զիջել)-ը՝ զվայր իջանել, խոնարհել, ցածանալ, մեղմանալ, նուաղիլ^ը, բայց հետագայում ստացվել է աչնպես, որ եթե իջնել-ը պահպանվել է իր բուն նշանակութամբ, ապա զիջնել-ը իմաստի փոփոխութամբ նշանակել է ժիստ իջնել, ապա՝ հպարտութիւնից, բարկութիւնից իջնել^ը և վերջապես՝ աշխարհարարում ձեռք է բերել մի նոր՝ տեղի տալ նշանակութիւնը^ը:

Կամ թե չէ՝ ևրր մենք համեմատում ենք գալ և զգալ բառերը, տեսնամ ենք, որ գալ-ը միջև ախոր էլ նշանակում է՝ ճեկաւորել, փոխել անտի ախոր, ի հեռաւոր վայրի ի մօտաւորն՝ իսկ զգալ-ը կթե նախապես նշանակել է՝ թորպես թէ գիւրե կամ յինքն գալ⁸, ապա հետագայում ստացել է թորեէ զղալարանքով ըմբռնել՝ ընդունել մի բան», ճգիտակցել, զնահատել հասկանալ⁹ և այլն նշանակութիւնները։ Նուրն ձեռով, կթե թափել-ը նշանակել ու ախոր էլ նշանակում է, թորպես թէ թափով իմն հեղուլ կամ թափուր առնել։ հեղուլ ի գուրս, զատարիկ իմն¹⁰, ապա գ-ի հալվեմամբ նա ստացել է թթափել զթմրութիւն» իմաստը, որ ալկի իոնիրկտ նշանակում է՝ անզգայութիւնից ուշքի գալ, ուշաբերվել, զգաստանալ, խելքը գլուխը հալաքել և այլն։

Իմաստապետ, անշուշտ, տարբեր են նաև հոգ (յոգ) և զոգ (զօգ) ձևերը. որոնցից եթե առաջինը նշանակում է պարզապես Վրպա, շաղկապ որևէ մասանց. յօդուած անդամոց. յարումն. կցումն», ապա երկրորդը, հետևանքով դրանից, ստացել է ժամուր հոգ, որպես ավելի սերտ միասնականություն, զուգակապ՝ նշանակությունը, և հենց այդ պատճառով էլ, օրինակ, զոգել ըստոր գործ է ածվում մետաղի մասերն իրար հետ կցելու. ամրացնելու իմաստով:

Անշուշտ, կարելի է մեկ առ մեկ գուգադրել բոլոր ձևերը (ինչպես՝
արդ—գարդ. արդարել—գարդարել, եղծել—գեղծել, արթուն—գարթուն

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 190:

² Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 98:

³ Հո. Աճառլյան, Հայերեն արձատական բառարան, հատ. 1, էջ 270:

⁴ Նոր քաղաքիոր Հայկազեան լեզուի, հաս. 1, էջ 867:

U29, 49 736:

* Հմմտ. Մ. Արեւայան. Հայոց լեզվի տեսություն, էջ 190:

⁷ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, հատ. 1, էջ 525:

U29, 49 724:

⁹ Ստ. Մալխասյանց, Հանրեն բազարական բառարան, հատ. 2, էջ 16—17:

10 Նոր բառացիորէ Հայկազեան լեզուէի, հաս. 1, էջ 803:

տրմանալ—զարմանալ, եռուն—զեռուն, հանցանք (լ+անց+անք)—զանցանք, հատել—զատել, հեղել—զեղել և այլն, ցույց տալով նրանց իմաստալիքն տարբերություններն ու առանձնահատկությունները, բայց կարծում ենք, բերված մի քանի օրինակներն էլ ինքնին պարզ են դարձնում, որ «գ» նախդիրը սոսկ սաստկական իմաստ չի հաղորդել բարդվող արմատներին, ալ դրանց հետ միասին արտահայտել է նոր նշանակություններ, որոնք էլ իրենց հերթին քարացած չեն մնացել, այլ ժամանակի ընթացքում կրել են իմաստալիքն զգալի փոփոխություններ:

Այսպիսով, «գ»-ն մեկն է հնագույն այն նախդիրներից, որոնք լրագույրվելով ու ձուլվելով առանձին արմատների ու ձևերի հետ, կազմել են հարյուրավոր բառեր և դրանով իսկ մեծապես նպաստել հայերենի բառալիքն կազմի հարստացմանն ու աճին: Բայց ի տարբերություն որոշ նախդիրների, նա մեզ ներկայանում է ոչ իբրև նախածանց (հմտ. առարկել, առողանել, առհասարակ, ընդօրինակել, ընդվզում, ընդամենը և այլն)¹, այլ արմատին սերտորեն ձուլված լինելով ուղղակի հանդիսանում է նրա մի ժանրաժանելիք մասը:

Իսկ սա էլ իր հերթին, թերևս մի ավելորդ անգամ, վկայում է, որ վ-ով և առանձին արմատներով նոր բառեր կազմվելու օրենքը վաղուց է, ինչ կենսունակ չէ. և մինչև անգամ զօծ ձևը, որ առանձին ավանդված չէ, բարդության մեջ գործ է ածվել անցյալի խորքերում, ինչպես՝ ոսկեզօծ, արծաթազօծ, որոնցից միայն հետագայում են բալական ձևեր (ոսկեզօծել, արծաթազօծել) կազմվել:

Այդ օրենքը մեռած է նաև բարբառներում, որոնց մի մասում թևե գործածական են գրական լեզվին ոչ հատուկ որոշ ձևեր (օրինակ՝ զիրավ տալ, զիրավ անել, զիրավ ածել, զիրավ քաշել, զիրավ ընկնել, զինքը տալիք տալ և այլն), բայց, այնուամենայնիվ, դրանք ես գալիս են հնուց և հետևաբար՝ կապվում են գրաբարի հետ:

Այդ բուրրով հանդերձ իբրև ճշմարտություն է մնում այն, որ երբևիցե «գ» նախդիրը բառակազմական չափազանց մեծ դեր է խաղացել հայերենի բառագանձի հարստացման գործում և իսկապես ունեցել է բառակազմական խոշոր արժեք ու նշանակություն, որոնց էլ հենց վերաբերում է մեր այս բառաքնական էտյուդը:

¹ Տեղին է հիշատակել, որ գոցենո Ս. Գրիգորյանը իր «Հայոց լեզու» ձեռնարկում (Հայպետուսմանկհրատ, 1957 թ.) միամտորեն կարծում է, թե ընդգլխի, բնդեմ, բղղիմալի, բնդղիմալստուրյուն բառերում «բնդ»-ը ոչ թե նախածանց է, այլ կապ է (էջ 172):